

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS) ԾՐԱԳԻՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՐՔԱԹՎԱ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Լրացվում է այն մատակարարի կողմից, որը թույլատրված ծառայություններ է տրամադրում մի քանի ստացողների)

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՆՈՒՆԸ`	ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ`
--------------------	--------------------

ՄԱՍ A. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՐՔԱԹՎԱ ԳՐԱՖԻԿ

ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ`

- Նահանգային օրենքը (սոցիալական ապահովության և հաստատությունների մասին օրենսգրքի 12300.4 բաժին) սահմանափակում է IHSS և անձնական ինսանքի այլընտրանքային ծառայությունների ծրագրերի մատակարարների IHSS և WPCS տրամադրելու շաբաթական առավելագույն աշխատանքային ժամերը: Բազմաթիվ ստացողների համար աշխատող մատակարարի յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա աշխատաժամանակը սահմանափակվում է 66 ժամով:
- Առավելագույն շաբաթական աշխատաժամանակը չի ներառում ուղևորության ժամանակ, ինչպես նկարագրված է այս ձևի Բ մասում: Աշխատանքային շաբաթը մեկնարկում է կիրակի ժամը 12:00-ին (կեսգիշեր) և ավարտվում` հաջորդ շաբաթ օրը, ժամը 11:59-ին երեկոյան:
- Ստացողները իրավասու են ծառայություններ ստանալ ամսական կտրվածքով, և նահանգային օրենքի համաձայն, ստացվող ծառայությունների քանակը սահմանափակված է շաբաթական կտրվածքով: Դուք ծանուցում կստանաք այն մասին, թե ձեր ստացողներից յուրաքանչյուրը թույլատրված ծառայության համար շաբաթական և ամսական քանի ժամ է ստանում: Դուք չպետք է աշխատեք ավելի քան ստացողի համար թույլատրված ժամերը: Այնուամենայնիվ, որոշ հանգամանքներում, դուք հնարավոր է ավելի շատ աշխատեք, քան ստացողի շաբաթական թույլատրված ժամերն են: Ստացողը կարող է փոփոխել իր շաբաթական թույլատրված ժամերը, սակայն նա պետք է ստանա վարչաշրջանի հավանությունն այն դեպքում, եթե փոփոխության արդյունքում մատակարարը կամ ավելի շատ արտաժամյա աշխատանք է կատարում ամսվա ընթացքում, քան նա սովորաբար աշխատում է, կամ 40 ժամից ավել է աշխատում ստացողի համար` ցանկացած աշխատանքային շաբաթվա ընթացքում (այն պարագայում, երբ ստացողի ծառայությունների համար թույլատրված ժամաքանակը կազմում է 40 ժամ կամ ավելի քիչ աշխատանքային շաբաթում):
- Որպես մատակարար` ձեր պատասխանատվությունն է`
 - Հավաստիացնել, որ ընդհանուր հանրագումարային ժամերի քանակը, որ դուք աշխատում եք ստացողներին լիազորված ծառայություններ տրամադրելու համար աշխատանքային շաբաթվա ընթացքում, չի գերազանցում աշխատանքային շաբաթվա 66 ժամը:
 - Հավաստիացնել, որ ժամերն, որոնք դուք աշխատում եք ձեր ստացողներից որևէ մեկին ծառայություններ տրամադրելու նպատակով, չեն գերազանցում այդ ստացողի շաբաթական թույլատրված ժամերն, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամերը համապատասխանաբար փոփոխված են:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ

- Այնպես արե՛ք, որ եթե ձեր ստացողներից որևէ մեկը փոփոխում է իր շաբաթական թույլատրված ժամերն, որպեսզի դուք ավելի շատ աշխատեք, քան թույլատրված ժամաքանակն է, ապա դուք ավելի քիչ ժամեր աշխատեք նախորդ կամ հաջորդ շաբաթվա ընթացքում՝ չգերազանցելու վերջինիս համար թույլատրված ամսական ժամերը կամ չկատարեք սովորականից ավելի շատ արտաժամյա աշխատանք՝ ամսվա ընթացքում:
- Եթե դուք ներկայացնեք ժամանակացույց, որում դուք խախտում եք աշխատանքային շաբաթվա գրաֆիկը հետևյալ որևէ եղանակով, դուք կհամարվեք խախտում կատարող:
 - Դուք աշխատում եք ավելի քան 40 ժամ շաբաթական առանց վարչաշրջանի հավանության, այն ստացողի համար, ում թույլատրված է 40 կամ ավելի քիչ ժամ աշխատանքային շաբաթվա համար:
 - Դուք աշխատում եք ավելի շատ ժամեր ստացողի համար, քան նա իրավասու է ստանալ աշխատանքային շաբաթվա համար, առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով, դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարում ամսվա ընթացքում, քան դուք սովորաբար կկատարեիք:
 - Դուք աշխատում եք բազմաթիվ ստացողների համար և աշխատում եք ավելի քան 66 ժամ աշխատանքային շաբաթվա ընթացքում: Դուք պահանջում եք յոթ ժամից ավել ուղևորության ժամանակի համար (տե՛ս այս համաձայնագրի Բ մասը):
- Եթե դուք խախտեք աշխատանքային շաբաթվա ժամանակացույցը վերը նկարագրված որևէ եղանակով, ապա ձեզ սպասվում է հետևյալը՝

ԱՌԱՋԻՆ ԽԱԽՏՈՒՄ	<ul style="list-style-type: none"> • Դուք և ձեր ստացողը(ները) կստանաք խախտում կատարելու վերաբերյալ ծանուցում՝ բողոքարկման իրավունքի մասին տեղեկատվության հետ:
ԵՐԿՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄ	<ul style="list-style-type: none"> • Ձեր ստացողը(ները) և դուք կստանաք խախտում կատարելու մասին ծանուցում, և դուք կունենաք ընտրություն՝ ավարտելու աշխատանքային շաբաթվա և ուղևորության ժամանակի սահմանափակումների մասին մեկանգամյա ուսուցման դասընթացը: Եթե ընտրեք անցնել ուսուցումն, ապա դուք կխուսափեք երկրորդ խախտում կատարելուց: • Եթե չընտրեք ուսուցումը ծանուցման օրվանից 14 օրացուցային օրվա ընթացքում, ապա կստանաք ձեր երկրորդ խախտման ծանուցումը՝ բողոքարկման իրավունքի մասին տեղեկատվության հետ:
ԵՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄ	<ul style="list-style-type: none"> • Դուք և ձեր ստացողը(ները) կստանաք երրորդ խախտման մասին ծանուցում՝ բողոքարկման իրավունքի մասին տեղեկատվության հետ: • Ձեր կիեռացնեն IHSS ծրագրում IHSS մատակարարի աշխատանքից երեք ամսով:
ԶՈՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄ	<ul style="list-style-type: none"> • Դուք և ձեր ստացողը(ները) կստանաք չորրորդ խախտման մասին ծանուցում՝ բողոքարկման իրավունքի մասին տեղեկատվության հետ: • Ձեզ կիեռացնեն IHSS ծրագրում մատակարարի աշխատանքից մեկ տարի ժամկետով:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ. Դուք պետք է լրացնեք աղյուսակը ստորև, որը կօգնի ձեզ պլանավորել ձեր աշխատանքային շաբաթվա ժամանակացույցը: Ձեր ժամանակացույցը պետք է ներառի ձեր կողմից ձեր բոլոր ստացողներին մատակարարվող ծառայությունները և չպետք է գերազանցի ցանկացած աշխատանքային շաբաթվա 66 ժամը: Ձեր ստացողներից յուրաքանչյուրի ընդհանուր առավելագույն շաբաթական ժամերի մասին ձեզ կձեռնարկի «Ծանուցում մատակարարին ստացողի թույլատրված ժամերի և ծառայությունների մասին» ձևի միջոցով (SOC 2271 ձև): Եթե ունեք ավելի քան երկու մատակարար, կցեք լրացուցիչ թերթեր:

1. Սյունակ A-ում գրեք յուրաքանչյուր ստացողի **անունը**, որի համար դուք տրամադրում եք թույլատրված IHSS ծառայություններ:
2. Սյունակ B-ում նշեք սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողի **գործի համարը**:
3. Սյունակ C-ում նշեք սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողի համար աշխատանքը **սկսելու ամսաթիվը**:
4. Սյունակ D-ում նշեք սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողի **հասցեն**:
5. Սյունակ E-ում գրեք օրվա ժամերի ընդհանուր քանակը (շաբաթ վա յուրաքանչյուր օրվա համար), որի ընթացքում դուք աշխատում կամ պլանավորում եք աշխատել՝ տրամադրելու IHSS թույլատրված ծառայություններ սյունակ A-ում թվարկված յուրաքանչյուր ստացողի համար:
6. Սյունակ F-ի համար, գումարեք սյունակ E-ի յուրաքանչյուր օրվա ժամերի ընդհանուր քանակները, որի ընթացքում դուք աշխատում կամ պլանավորում եք աշխատել՝ IHSS թույլատրված ծառայություններ տրամադրելով սյունակ A-ում թվարկված յուրաքանչյուր ստացողին, և սյունակ F-ում գրեք շաբաթվա ընթացքում յուրաքանչյուր ստացողի համար նախատեսված ընդհանուր ժամերի քանակը:
7. Սյունակ F-ի ստորին հատվածում, գումարեք ընդհանուր ժամաքանակն, որ դուք աշխատում կամ պլանավորում եք աշխատել՝ IHSS թույլատրված ծառայություններ տրամադրելով ձեր բոլոր ստացողներին յուրաքանչյուր շաբաթ:

A	B	C	D			E							F
Ստացողի անուն	Ստացողի գործի #	Սկսելու ամսաթիվ	Ստացողի հասցեն			Ընդհանուր ժամաքանակ, որը ես աշխատել եմ կամ նախատեսում եմ աշխատել							Ընդամենը ժամաքանակ
			Հասցե	Քաղաք	Փոստային դասիչ	Կրկ	Երկ	Յուր	Չուր	Հինգ	Ուր	Շբթ	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱԶԱՆԱԿԸ, ՈՐԸ ԵՍ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ ԿԱՄ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԵԼ՝
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈԼՈՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

ՄԱՍ B. ՈՒՂԵԿՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

- Եթե դուք ուղևորվում եք մեկ ստացողի գտնվելու վայրից մեկ այլ ստացողի գտնվելու վայր նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ երկու ստացողի IHSS ծառայություններ տրամադրելու նպատակով, ապա դուք կարող եք վճարվել այդ ուղևորության ժամանակի համար, սակայն այդ ժամանակը մեկ աշխատանքային շաբաթվա ընթացքում չի կարող գերազանցել 7 ժամը : Այս 7 ժամն ավելանում է մատակարարի 66 ժամին:
- Այդ ուղևորության ժամանակի դիմաց վճարվելու համար, դուք պետք է ուղևորվեք մեկ ստացողի գտնվելու վայրից մյուս ստացողի գտնվելու վայր անմիջապես առանց կանգ առնելու: Եթե դուք, երկրորդ ստացողի գտնվելու վայր ուղևորվելու ճանապարհին, կանգ եք առնում կարճատև ժամանակով, օրինակ՝ բենզալցակայանում վառելիք լիցքավորելու համար, դա դեռևս համարվում է ուղիղ ուղևորություն: Սակայն, եթե դուք կանգ եք առնում անձնական գործեր կատարելու նպատակով կամ եթե վերադառնում եք ձեր տուն, ապա դուք կարող եք վճարվել միայն այն ժամանակի համար, որը կպահանջվեր ծառայությունների մատուցման նպատակով մեկ գտնվելու վայրից մյուսն ուղևորվելու համար՝ առանց անձնական գործերի կատարման նպատակով արված կանգառների:
- Եթե ձեր ընդհանուր հաշվարկված շաբաթական ուղևորության ժամանակը գերազանցում է 7 ժամն, ապա ձեզ անհրաժեշտ կլինի փոփոխել ձեր աշխատանքային ժամանակացույցը այնպես, որ ձեր ուղևորության ժամանակը չգերազանցի 7 ժամը:

Դուք պլանավորում եք անմիջապես նույն օրվա ընթացքում մեկնել թույլատրված ծառայությունների մատուցման մեկ վայրից դեպի մեկ այլ ստացողի թույլատրված ծառայություններ մատուցելու վայրը:

ԱՅՈ ՈՉ

Եթե դուք պատասխանում եք «ՈՉ», դուք չպետք է լրացնեք ՄԱՍ B-ն, անմիջապես անցեք ՄԱՍ C:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

ՄԱՍ B ՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝ Դուք պետք է լրացնեք այս բաժինն, ինչը կօգնի ձեզ պլանավորել ձեր վճարվող ուղևորության ժամանակն այնպես, որ ձեր ընդհանուր ուղևորության շաբաթական ժամանակը չգերազանցի 7 ժամը: Քանի որ դուք ուղևորություններ եք կատարում, ձեզ կարող է անհրաժեշտ լինել ներկայացնել ապացույց ժամանակի և անցած մղոնների վերաբերյալ:

1. Հաջորդ էջում Սյունակ A-ում գրեք ստացողի(ների) անունը(ները), որից/որոնցից դուք ուղևորվելու եք:
2. Հաջորդ էջում Սյունակ B-ում գրեք ստացողի(ների) անունը(ները), որի/որոնց մոտ դուք ուղևորվելու եք:
3. Հաջորդ էջում Սյունակ C-ում նշեք ամսաթիվը, երբ դուք կսկսեք ուղևորվել Սյունակ A-ում նշված ստացողի գտնվելու վայրից դեպի Սյունակ B-ում նշված ստացողի գտնվելու վայրը՝ թույլատրված ծառայություններ մատուցելու համար:
4. Հաջորդ էջում Սյունակ D-ում նշեք, թե որքան հեռու (մղոնով) դուք պետք է ուղևորվեք մեկ ստացողի գտնվելու վայրից մինչև հաջորդ ստացողի գտնվելու վայրը:
5. Հաջորդ էջում Սյունակ E-ում նշեք, թե որքան երկար եք (րոպեներով) դուք գնահատում ձեր ուղևորությունը մեկ ստացողի գտնվելու վայրից մինչև հաջորդ ստացողի գտնվելու վայրը:
6. Հաջորդ էջում Սյունակ F-ում նշեք, թե շաբաթական քանի աշխատանքային օր եք նախատեսում նույն օրը ուղևորվել մեկ ստացողից՝ մյուսին:
7. Հաջորդ էջում Սյունակ G-ում բազմապատկեք այն ժամաքանակը, որը, ձեր գնահատմամբ, կպահանջվի անմիջապես մեկ ստացողի գտնվելու վայրից՝ մեկ այլ ստացողի գտնվելու վայրը ուղևորվելու համար (Սյունակ E), այն օրերի քանակով, որոնց ընթացքում ուղևորվելու եք ստացողների գտնվելու վայրերի միջև յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ընթացքում (Սյունակ F)՝ ստացողների գտնվելու վայրերի միջև ուղևորվելու ընդհանուր ժամանակը նշելու համար (Սյունակներ A և B):
8. Գումարեք Սյունակ G-ի տողերում նշված ամբողջ ժամանակը և գրեք այն Սյունակ G-ի ներքևի մասում:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

A	B	C	D	E	F	G
Ստացողների անունները, որոնց գտնվելու վայրերի միջև դուք ուղևորվելու եք		Սկսելու ամսաթիվ	Հեռավորությունը ստացողների գտնվելու վայրերի միջև (մղոնով)	Ստացողների գտնվելու վայրերի միջև ուղևորության գնահատված ժամանակը (րոպեներով)	Օրերի քանակը, երբ դուք ուղևորվելու եք ստացողների գտնվելու վայրերի միջև յուրաքանչյուր աշխատանքային շաբաթ	Ստացողների գտնվելու վայրերի միջև ուղևորության գնահատված ընդհանուր ժամանակը յուրաքանչյուր աշխատանքային շաբաթ (Col. E x Col.F)
Ումից	Դեպի					

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱԲԱԹՎԱ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ՝

Ինչպե՞ս եք տեղաշարժվելու ստացողների գտնվելու վայրերի միջև:
 ՄԵՔԵՆԱ* ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ԱՅԼ ՆՇԵՂ՝

Եթե դուք ինքներդ եք վարելու տրանսպորտային միջոցը ստացողներին այցելելու նպատակով, ապա դուք պետք է ունենանք Կալիֆորնիայի վարորդական իրավունքի վավեր վկայական և ապահովագրությունը հաստատող փաստաթուղթ, իսկ օգտագործվող տրանսպորտային միջոցը պետք է ունենա ընթացիկ գրանցում: Եթե դուք չունեք Կալիֆորնիայի վարորդական իրավունքի վավեր վկայական և ապահովագրությունը հաստատող փաստաթուղթ կամ տրանսպորտային միջոցի ընթացիկ գրանցում, ապա ձեզ օրենքով չի թույլատրվում վարել տրանսպորտային միջոց: Դուք պետք է ընտրեք այլ փոխադրամիջոց, ինչպես օրինակ՝ հասարակական տրանսպորտ: Եթե դուք նախընտրում եք վարել ինքներդ, բայց տրանսպորտային միջոց վարելու ձեր օրինական իրավունքի կարգավիճակում տեղի է ունենում բացասական փոփոխություն (օրինակ՝ ձեր Կալիֆորնիայի վարորդական իրավունքի, ավտոապահովագրության կամ տրանսպորտային միջոցի գրանցման ժամկետն ավարտվում է կամ այլևս վավեր չէ), ապա դուք պետք է տեղեկացնեք ձեր ստացողին և ընտրեք այլ փոխադրամիջոց: Եթե դուք չեք տեղեկացնում ձեր ստացողին կարգավիճակի այս փոփոխության մասին, ապա ձեզ կարող են համարել IHSS ծրագրի պահանջների խախտող և ձեր ծառայությունները կարող են դադարեցվել ձեր ստացողի կողմից:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՐԸ _____

ՄԱՍ Ը. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես հայտարարում եմ, որ կարդացել և հասկացել եմ սույն փաստաթղթում նշված պահանջները և համաձայն եմ գործել այդ պահանջներին համապատասխան: Ես նաև հայտարարում եմ, որ սույն ձևում իմ կողմից տրամադրված բոլոր տվյալները ճիշտ են և ստույգ, որքանով ինձ հայտնի է: Ես համաձայն եմ վարչաշրջանին 10 օրացուցային օրվա ընթացքում տեղեկացնել իմ կողմից «Մատակարարի աշխատանքային շաբաթվա և ուղևորության ժամանակի համաձայնագրում» տրամադրված տվյալների փոփոխման մասին, և կախված այն հանգամանքից, թե ինչ տվյալ է փոխվել, ինձանից կարող է պահանջվել լրացնել կոդ SOC 2255 ձևը:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՅՈՒՄԸ՝ _____ ԱՄՍԱԹԻՎ՝ _____

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌ՝ _____

Միայն վարչաշրջանի օգտագործման համար / FOR COUNTY USE ONLY

WORKER NAME: _____ DATE: _____

ESTIMATED TRAVEL TIME REVIEWED: YES NO SOURCE USED TO VERIFY TRAVEL TIME: _____

NOTES: _____